# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.10.2015



**Ավագ սերնդի սիրելի՛ բարեկամներ**

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ: Այս օրը հրաշալի հնարավորություն է ևս մեկ անգամ  շնորհակալանքի   ու երախտիքի խոսքեր ուղղելու ձեզ:  Հոկտեմբերի  1-ն  աշխարհում տոնվում է  որպես Տարեցների միջազգային օր, սակայն հայ ազգը մշտապես  է հարգանք ու ակնածանք տածել ավագ սերնդի ներկայացուցիչների նկատմամբ՝  իր մեջ ունենալով   երախտագիտության, սիրո ու նվիրումի  ընդգծված դրսևորումներ:

Մեր ջանքերն ուղղված են  ապահովելու ձեր բարօրությունն, առողջությունն ու ձեր հանդեպ հոգատար վերաբերմունքը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ   այս  կարևոր օրվա կապակցությամբ և մաղթում, որ սերը, առողջությունն ու բարեկեցությունը միշտ ուղեկից լինեն ձեզ:

Արարատի մարզպետ՝                                        Ռուբիկ Աբրահամյան